

Ա Ր Ա Ր Ա Տ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ •

ԹԻԻ Բ. — ՇՐՋԱՆ Է

1874

ՏԱՐԻ Զ. — ՓԵՏՐՎԱՐ 28

ԿՐՈՆԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

Ժ Ո Ղ Ո Վ Ո Ց

ՀԱՅԵԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՀԱՆԴԵՐՁ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՄԲԲ.

(ԾՐԱՆՆԱԳՐԱՆ) :

Գ. Լ. Բ.

Երկրորդ ժողով յԱշտիշապ, և է Շա-
հապիւն Երկրորդ, լաւն պաշտպանութեան
սորք հաւասար, ընդդէմ հաւաքանայ Պար-
սից:

(450): Յազկերտ արքայ Պարսից յեր-
կոտասաներորդումամի թագաւորութեան
իւրոյ, որ առ ժամանակ մի ի բաց եղեալ
էր զհալածումն քրիստոնէից, առեալ
զթուղթ ի վեհ — Գեհշապհոյ եղևոյ ի
վերականգնութեան աշխարհիս Հայոց յա-
ղաքս անդրդուելն մնալոյ Հայաստանեայց
ի հաւատս, խորհրդով նախարարաց իւ-
րոց և մեծամեծաց, հրամայէ հազարա-
պետին իւրում Միհրնիսէհի գրել տալ

մոզպետին ի դիմաց իւրոց զազանդմոզու-
թեան առ Հայս, զի կամ դարձցին, և
կամ անպատասխանի այնմ մնացեալ,
պարտաւորեացին. ընդ որում և ինքն զրէ
հրովարտակ առ ամենայն Հայս, թողեալ
զօրէնս Քրիստոնէութեան՝ ընդունել ըզ-
դէնս Պարսից. զորոց օրինակս յառաջ
բերէ Փարսիցին, և զմոզուց թղթոցն և
զազանդոցն՝ պատմագիրն մեր Նզդիշէ ի
զլ. Բ:

Ստացեալ զայսպիսի թուղթ ազանդոց
Պարսից սպառնազին հրովարտակաւ Յազ-
կերտի՝ եկեղեցականաց Հայոց և իշխա-
նաց, Յովսէփ Սաթուղիկոս զրէ փութա-
նակի առ համօրէն Նպիսկոպոսունս աշ-
խարհիս գալ գումարել յԱյրարատ յԱր-
տաշատ քաղաք արքունական, ի պատաս-
խանագրութիւն հրովարտակին և ընդդէմ
ազանդոց մոզուցն:

Յայսմիկ ժողովի գումարին Նպիսկո-
պոսք տասն և եօթն, բազում Քրտեպիս-
կոպոսք և Նրիցունք, Գևորգ երէց ի
վանանդայ, Խորէն ի Մրենոյ և Գաւիթ
Մամիկոնեան, ևս և վանականք բազումք
և վանահարք և նախարարք ամենայն, որք

վասն պահպանութեան աշխարհին՝ չէին գնացեալ ի պատերազմ Պարսից, զորոց անուանս մի առ մի յիշատակէ Նզիշէ ի պատմութեան ընդ սրբոց Նախկոպոսաց, երիցանց և վանականաց եղելոց յայնմիկ Ճողովի, ուր ընթերցեալ միայն զհրովարտակ Յազկերտի, պատասխանի արար Ճողովն հրամանաւ նախարարաց ի բերանոյ ամենեցուն առ թագաւորն համարձակ բանիւք երկուցն ևս նամակաց, ո՛չ արժանի մաքուր լսելաց համարեալ և ըզթուղթ մոգպետին որ յաղագս փոփոխելոյ զօրէնս քրիստոնէութեան: Իսկ զգիր Միհրնբերսէհի հազարապետին գրեալ ի մոգպետէն՝ ընթերցեալ Յովսէփ Աթուղիկոս ընդ եպիսկոպոսաց Ճողովոյն, գրեն և այնմ պատասխանի բազմապատիկ վերայութեամբ զճմարտութենէ քրիստոնէական հաւատոյ, հերքելով և արհամարհելով զսնտոի պաշտամունս արեղական, զոր նոքա պաշտէին. որպէս տեսանի յՎ. զերս Նզիշէի, եր. 26, ի տպագրեալ ըն:

Այլ իբրեւ ընդունի Յազկերտ զայս պատասխանի ի վերադարձին Միհրնբերսէհի հանդերձ մոգպետաւն, և տեղեկանայ յամենայնի ի նոսին զհաստատուն մտացն Հայոց ի քրիստոնէական հաւատքս, և լսէ զարհամարհանս կրօնի իւրեանց համարձակ և անվեհեր բանիւք, դառնացեալ ի միտս առաւել ի հրապուրանաց չարալեզու մոգպետին, զբէ հրովարտակ լի ցասմամբ առ բովանդակ նախարարս Հայոց յականէ անուանէ պահանջելով զնոսին, ո՛չ իբրեւ ըստ նախնի սովորութեան թագաւորացն Պարսից, այլ զայրազին բանիւք:

Ըստ որոյ և նախարարք զխացեալ զպատճառ կոչելոյ նորա ո՛չ հրաւիրանօք խաղաղութեան, այլ խռովութեան վասն կորստեան ոգւոց, ապաւինեալք ամենեքին յօգնականութիւն Լստուծոյ և եթ, գումարեալք ի մի վայր՝ ուխտ գնեն անսասան ի հաւատսն մնալոյ ի ձեռն սրբոյն Յովսէփայ, և ապա հաստատեալք ի միտս, գնացին առ թագաւորն յաղագս գտանելոյ զնաղաղութիւն աշխարհին և ազատելոյ զնախարարսն բանտարկեալս անդէն յաշխարհին Պարսից:

Այս լինի Ներկորդ Ճողով ի Շահապիվան ի բանակետղ զօրաց սպարապետացն Հայոց յամին 450:

ԳԼ. Ժ.

Առջին Ճողով է Ղվին վան ընդունեան Աթուղիկոսի, և խոստովելոյ զԼեւոն Աթուղիկոսաւն յԱջնաշէն է Ղվին:

(452): Յետ նահատակութեան սրբոց Վարդանանց և կոտորածի զօրացն Պարսից ի նմին պատերազմի, Լտորովիզդ պարսիկ եկեալ ի մարդպանութիւն աշխարհին Հայոց և կոպեալ զԱթուղիկոսն Յովսէփ, զՎեռնդ երէց, զՍահակ եպիսկոպոս Ռշտունեաց և զերեւելի քահանայս յԱյրարատեան աշխարհէ՝ առաւել զայնոսիկ, որք կործանեալ էին զատրուշանս Պարսից կրակատանցն պաշտօնէից, առաքէ առ Յազկերտ ի ստուգել զպատճառս մեծի պատերազմին. և ապա ժողովեալ զամենայն նախարարս և բնակիչս յիւրաքանչիւր տեղեաց, ցուցանէ նոցա զարքունի հրամանն յաղագս վարելոյ կեանս ըստ առաջին կարգին և

համարձակ պաշտելոյ յամենայն Ահեղեցիս զքրիստոնէութիւն :

Ժողովակ նախարարացն առաքեն սո մարդպանն զպատգամաւոր, զի նախ առցէ ի թագաւորէն զդաշն խաղաղութեան ուխտի ընդ իւրեանս, և հաշտութեան, և ապա զնասցեն ինքեանք ի դուռն արքունի. առ որ և եկեալ իսկ էր Ատրորմիդդ, առաքել զնախարարսն առ Յազկերտ, զի ցուցցեն ընդ սրբոց եպիսկոպոսացն զպատճառ պատերազմին :

Այսպէս յետ յայտնելոյ նախարարացն զկամս իւրեանց Պարսիկ մարզպանին, չե ընկալեալ զսոյմանն արքունի, գան ի Ղալին քաղաք և կոչեալ զեպիսկոպոսունըս, ընտրեն ի Հայրապետութիւն փոխանակ Յովսէփայ՝ Սաթուղիկոս Հայոց զմեծ եպիսկոպոսն Սանազկերտոյ՝ զՏէր Մելեաէ յամի 452, և զԱթու Սաթուղիկոսութեան փոխադրեալ ի Ղալին, անդր հաստատեն զայն, յետ գնալոյ սրբոյն Յովսէփայ ի Պարսս. զի ոչ կարէին թողուլ զաշխարհն առանց Սաթուղիկոսի :

ԳԼ ԺԱ.

Յովհան Սանդակունի Սաթուղիկոս Հայոց և Կանոնադրութիւնն նորա :

Յովհան Սանդակունի՝ որ էր յաշակերտութենէ սրբոյն Սահակայ և Մեսրոփայ և աշակերտակից Գիւտ Սաթուղիկոսի, յետ Քրիստափորի կարսւ զԱթու Սաթուղիկոսութեան ազգիս յամին 480. և եկաց ի Սաթուղիկոսութեան զամս վեց ի Ղալին յաւուրս մարզպանութեան Սամիկոնեան Վահանայ :

Պատմագիրք ազգիս ոչ յիշատակեն թէ արարեալ իցէ նորա Ժողով ի կառավարութիւն եկեղեցւոյ և ժողովրդոց կարգեալ կանոնս վասն բարեկարգութեան, այլ ամենեքին նոքա միահամուռ զրեն զիոյթն սրբոյ Հայրապետին ի կարգաւորել զժամերգութիւնս աղօթիւք և քարոզիւք, ի ճոխացուցանել զՄաշտոց զիրս եկեղեցական ծիսից, և ի գրել զղանադան ճառս հոգեւեցս : Այլ գրեթէ ի բովանդակ կանոնագիրս մեր կան սորա կանոնադրութիւնք երկւք առանձին զիսովք արտաքոյ ի տպագրելոյն կանոնաց ընդ ճառս նորին յամին 1836, ի Վնետիկ. զորս անշուշտ երեւի գրեալ նորա ի միասին ընդ կարգաւորութեան եկեղեցական ժամերգութեանց՝ վերաբերեալս ի վեճակ եկեղեցականաց և ժողովրդոց իւրումն դարու. և չեք երկբայութիւն եթէ ոչ եղեն Ժողովով յիշեալ կանոնադրութիւնքն. զի Ահեղեցին Հայաստանեայց ի Թարգմանչաց անտի մերոց սկսեալ պայծառանալ եկեղեցական երգովք և մաղթանօք, ի սորա աւուրս տակաւին բազում պէտս ունէր հարկաւորացն, ըստ որոյ և սուրբն Յովհան Սանդակունի որքան աղօթս և քարոզս գրեաց ժամերգութեանց, և յաւելուածս արար ի Մաշտոց և ի Պատարագամատոյցն ըստ Ասողկայ և Վարդանայ, այն ամենայն եղեն կարգ և կանոնք Ահեղեցւոյ և եկեղեցական պաշտամանց. վասն այսորիկ և Ժամագիրք անուանեալ եկեղեցական մատենան ժամերգութեանց ընծայի ոչ միայն սրբոյն Սահակայ և Մեսրոփայ, այլ և Գիւտի և Սանդակունւոյ սուրբ Հայրապետաց Ահեղեցւոյս մերոյ, ուստի և ի նմին ժամանակի ի կտր-

դաւորութեան անդ եկեղեցական պաշտամանցն առ ի նմանէ, եղեալ են և կանոնքն յիշատակեալ անուամբ նորա ի բարեկարգութիւն եկեղեցականաց :

Մեք աստանօր ըստ կարգի և ըստ ժամանակի կենաց նորա յառաջ բերեմք ի կանոնադրոց մերոց՝ զառաջին գլուխ կանոնաց նորին Մանդակունւոյ ըստ այսմ վերնադրի :

Յովնանն Սանդակունւոյ Հայոց Առաջնորդն և խորհրդակցի, աշակերտ եղելոյ որքոյն Սահակայ ԺԺԻ Հայրապետին Հայոց Առաջնորդն՝ Բան Կանոնական :

«Չմեծ և զանաւ, զմարդասէր և զբարերար Տեառնէ պարտիմք զոհանալ հանապազ, որ արար զմեզ բանաւոր, մտաւոր և հոգեւոր. և ետ մեզ ծանաչել զանուն իւր սուրբ. և ասէ. Աս ընդ ձեզ եմ յաւիտեանս ժամանակաց :

Վասն սրբոյ պատեքին պահոց ի կանոնըս՝ ի շաբաթու ոչ հրամայի պահել. և յայտ անտի է, զի շաբաթ աւուր իրիկունն ապաշխարողաց ոչ քարոզի ի մի դէման՝ ըստ Մովսեսի օրինադրին հրամանի պարտիմք պատուել. և ի միւս՝ զի կարապետ է մեծի թագաւորին՝ յառաջընթաց ընդ առաջ ելանէ ճրագօք և մոմեղինօք՝ կիրակեկին :

Այլ վասն կիրակեկի պահելոյ՝ ոչ կանոնք հրամայեն պահել, և ոչ վարդապետք. այլ նզովս և անէծս ի վերայ զընեն. զնոյն և ՅԺԲ Հայրապետքն ի Նիկիա՝ ի սուրբ Ժողովն նզովեցին :

Ապա յաւուր կիրակեկի և ի Չատկէն մինչև ցպենտէկոստէն՝ ծուներ կրկնելով չհրամայեցին յաղօթս կալ :

Ապա ի թէ ասիցէ որ՝ եթէ զինի որթոյ բեր է, և ձէթ ծառոց և ձուկն ջրոյ. ո՞վ անհեղեղ զգայարանք, այն իսկ է նետորի անիծելոյ աղանդն. զի Բարսեղ Առաքել զձուկն գազան ասէ, և Առաքեալն վկայէ ասելովն, Այլ մարմին ձկանց է, և այլ անասնոց և այլ թռչնոց :

Արդ՝ Առաքեալն մարմին ասէ, և հերձուածոյն ջուր. և զեմրդ իցէ ջուր, զի կենդանի է, յօդք, ոսկերք, ջիւղ, արիւն, աչք : Աղէ՛քնեա խորհրդիւ ի ձկունս և ի գազանս, որ ի ցամաքի են՝ առիւծ, ինձ, վիշապ, որ է օձ, և զիրք ասնն սիկղ և հիդրայ. սիկղ շուն ասի երեքգլխեան. և հիդրայն ևս չար քան զնա. բայց զեւրեանց որդիսն ոչ ուտեն, իսկ ձուկն զեւր մերձաւորն ուտէ, և մարդ ևս ուտէ. ապա զեմրդ է ջուր. այլ կան և հաւք ջրայինք և անասունք. և ո՞վ է որ առանց ջրոյ սրնանի :

Արդ զիրք զձուկն կենդանի ասին, պատարագ ևս առնեն. եկ և առ ձէթ. զիրք զեւղ և զձէթ միապէս ասին. Ասայի ասէ, Փայտ իւղոյ. և Վաւիթ ասէ, Ծերութիւն իմ ի ձէթ պարարտութեան : Արթ և առ Աւետարանագիրն, որ ասէ վասն կուսանացն՝ թէ Ձէթ ոչ առին. և դարձեալ՝ թէ Տուք մեզ յիւղոյդ ձերմէ. ահա յայտ է թէ իւղ և ձէթ միապէս են. և դարձեալ, Աղամ ոչ ի թէ պանիր եկեր, այլ պտուղ ծառոյ, և ել ի դրախտէն : Իսկ վասն զինոյ զիրք ասին, զարեցութիւնս չար քան զդիւահարս. զոր Առաքեալ ասէ, Մի արբենայք. և ոչ ասէ թէ մի՛ ըմպէք. զի թէպէտ և Նոյի հրամայեաց ըմպել վասն տրամու թեանն, նոյնպէս և մեզ ի վայելութիւն, ոչ թէ ար-

բենալ և զեղելի . և յորժամ կերակուր
ուտումք և լնումք, և ի նմին կամք, իսկ
յորժամ գինւով լնումք, զայլ խորհուրդ
ածեմք զմտաւ և ոչ զԱստուծոյն. վայ
այնոցիկ, Ասայի ասէ, որք յառնեն ընդ
առաւօտն և զհետ լինին ցբւոյն. զի գի-
նին իսկ անդրէն զնոսին այրէ. դարձեալ
ասէ, Վահանայն և մարգարէն յիմարե-
ցան՝ յարեցութենէ ցբւոյն : Յառաջ
ուխտաւորքն Սամուէլ և Սամսոն և որ-
դիքն Յովնադաբայ միս ուտէին, բայց զի-
նի և ցքի ոչ ըմպէին. զի զինի և հացօ-
ղի և մեղրօղի և ամբրաւօղի մի են, զոր
զիրք վկայեն :

Արդ պանիր, ձէթ, ձուկն, ձու ամեն մի
են. թէ ասէ որ ձու յոր քսան կենդանի
լինի, և կենդանւոյ իսկ անաւնոց յոր
քսան թէ դարման չլինի, մեռանի. բայց
զոր չին և Նոր Կտակարանաց ասացեալ է
և Վարդապետաց՝ որ են այս, Աթանա-
սիոս, Կիւրեղ, Յովհաննէս, Սահակ Ա-
բուսաղէմցի, Եկակ Մելիտինի, Գրիգոր
Աստուածաբան՝ Ազգիանզու, Գրիգոր
Նիւսեայ, Գրիգոր Կեսարացի, Բարսեղ
Կեսարացի, Իրինիոս, Որոգինէս, Յով-
սէպոս, Կղէմէսոս, Տիմոթէոս, Յով-
հան Կոստանդնուպօլսի, Օկնոբ, Սե-
րիանոս : Արդ զոր նոցա արգելեալ է մար-
դարէից և առաքելոց վկայութեամբ, չէ
պարտ ումք զանց առնել ի Չատկէն մին-
չև ցՊենտէկոստն ամենայն իրբև մի կիւ-
րակէ է. ծունր ոչ հրամայի զնել, այլ
յոտն կալով և երկրպագութեամբ մա-
տուցանել զաղօթան. ի Պենտէկոստէիցն
մինչև ցՎարդապետն մին շաբաթն ու-
տի, երկուն պահի. Վարդապետն ասն ա-
ռաքելոցն է, և մատրունք ըստ հնումն. ի

նորումս՝ նաւակաւիք սուրբ Ակեղեցւոյ
և մարտիրոսաց յիշատակ : Աւ ի Պեն-
տէկոստէն յառաջ ի ծոմոցն պահս ցուր-
բաթ օրն պահել՝ և յուրբաթուն ուտել՝
անկարգ է. պահել պարտ է մինչև յերե-
կոյ. և որք զուրբաթ որպէս զկիւրակէ
պահել և ի գործոց դատարկացուցանեն՝
մեղք են. և կոչն զնա ծեր. և ո՞յր տե-
սեալ է զծերութիւն նորա. զի հինգ օրն
աւագ են քան զնա. և որք ի չորեքշաբա-
թու և յուրբաթու մարտիրոսաց յիշա-
տակ առնեն՝ մեղք են. զի եթէ ի կարգի
էր, ապա ի զատկին ուրբաթ օրն պարտ
էր առնել մատաղ. զի Քրիստոս Աս-
տուած Արարիչն երկնի և երկրի յուր-
բաթուն խաչեցաւ. և ընթերցուածք և
Սաղմոս և Աւետարան յայն օր շատ են.
և յայն օր ամենայն մարդիկ ազատեցան ի
ծառայութենէ մեղաց. և դրախտն յայն
օր բացաւ ի ձեռն աւագակին. և զմար-
դիկ ի ծառայութենէ յայն օր զերծոյց
Քրիստոս. բայց կարգք Ակեղեցւոյ զայն
ուրբաթ պահել հրամայեն, և փոխանակ
նորա ուտել զայլ ուրբաթսն մինչև ցՊեն-
տէկոստէն : Աւ որ զԾնունդն առնեն յա-
ռաջ քան զՅայտնութիւնն՝ չէ արժան.
զի Ծնունդն և Յայտնութիւնն մի են. և
յայտ յընթերցուածոյն է, որ ասէ, «Յի-
սուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս», :

ԳԼ. ԺԲ.

Շինիւրբ Ժողովի Վարդապետաց, որ
հերեցան Բարձրաւորք և այլ Զեարարականք,
և քննեցան հրովարտելն Օկնոբի կայսեր և
Ժողովի Քաղկեդոնի :

(491) : Համբաւ հասեալ շփոթու-
թեանց ի Հայս հակառակորդաց ժողո-

վոյն Վաղկիդոնի, որոց էր գլուխ Գէօսկորոս Լալիսկոպոս Աղէքսանդրիոյ, ի ձեռն ջատագովչաց և աշակերտաց նորին, իբր թէ Յոյնք նովին ժողովով ընկալեալ իցեն զգիրսն Թէոփորոսի Մամեստացոյ, զոր սուրբն Սահակ մերժեալ էր աղգային ժողովով, և թէ հաղորդեալ իցեն նոքա ընդ նեստորականաց նովին ժողովով, Բաբելէն Սաթուղիկոս Հայոց յԱթմոյ որ ի Վանանդ, արար ժողով Լալիսկոպոսաց ի Սաթուղիկէ Մայր Լիկեղեցոջ Վաղարշապատայ. ուր եկին հասին և Սաթուղիկոսունք Վրաց և Աղուանից հանդերձ Լալիսկոպոսօք խրեանց:

Ի հանդիսի ժողովոյն նզովեն նախ ըզնեստորականսն և զամենայն համախոհս նոցին և զմոլորութիւնս, ընդ որս և զԼեօաիքեանցն, և ընթերցեալ զհենոգիկոն Օկենոնի կայսեր և հաւանեալ ընդ այն, ըստ նորին մտաց դատապարտեն զժողովն Վաղկիդոնի, համարեալ

“Նախ՝ թէ այն ժողով ընկալաւ ըզգիրս Մոպսուեստացոյն և զջատագովս նորին:

Երկրորդ՝ թէ այն ժողով բաժանեալ իցէ զԲրիտոս յերկուս գէմս և յերկուս որդիս, ըստ մտաց Նեստորի, սահման եղեալ ի վճիռս ժողովոյն յասելն. “Մեք Հայք և Հռոմք, Վիրք և Աղուանք մի խոստովանութեամբ եմք հաստատեալ ճշմարիտ հաւատով ի լաւ անդր. զոր աւանդեցին մեզ սուրբ Հարքն յերիս ժողովս. ոչ ընդունիմք զայսպիսի բանս հոյհոյութեան, այլ նզովեմք միաբան զնմանիս նորա,:

Պատճառ այսր ժողովոյ և հերքելոյ զժողովն Վաղկիդոնի բացայայտ ևս գրեն

աղգային պատմիչք մեր. յորոց Յովհաննէս Սաթուղիկոս, “Օպսու ժամանակաւ աստուածահաճոյ վարուք և բարեպաշտ հաւատով երջանիկ արքայն Հռոմոց Օկենոն վախճանէր, որ ի ժամանակի տէրութեան իւրոյ զմիգատարր և զօգախիտ բքայորդոր չար հերձուածս քաղկեդոնականաց ի բաց մերժեալ, ըզլուսամիւռ պայծառատարած ճառագայթաւէտ զհաւատս առաքելական ծաղկեցուցանէր յԼիկեղեցոջ Աստուծոյ, և Լա յաղաքս Անաստասոյ նորին յաջորդի ասէ, “Հաստատէր զաւանդութիւն բարեպաշտութեան հարցն սրբոց. և շէրջարեական թղթովք նզովեաց զամենայն հերձուածողս, ընդ ամենեսին և զժողովն Վաղկիդոնի նզովէր, և Իսկ վասն ժողովոյս այսորիկ՝ այսպէս. “Մեծ Հայրապետն Հայոց Բաբելէն առնէ ժողով Լալիսկոպոսաց Հայոց, Վրաց և Աղուանից ի Նոր քաղաքի ի սուրբ Սաթուղիկէի ի Մայրն Լիկեղեցեաց Հայոց. որք նմանապէս նզովեալ խոսեցին զժողովն Վաղկիդոնի. քանզի և չե իսկ էր ընկալեալ զաշխարհակործան աւանդութիւնն, այլ ի նմին հիման սրբոյն Պրիգորի հաստատեալ կային,:

ԳԼ. ԺԳ.

Երկրորդ ժողով է Գաւին, լսան Բաբելար-
գէլոյ զժողովն-երէն Քրիստոսի:

(ՄՏ Տեառն 527): Ներսէս Երկրորդ յաջորդեալ Վանդեայ յԱթոն Հայրապետական ի Բաղրեանդ զաւառէ ի գեղջէ Աշտարակաց յամի Տեառն 524, առնէ ժողով Լալիսկոպոսաց ի Գուին յԱթոն Հայրապետութեան յամի 527,

վասն ուղղելոյ զանկարգութիւնս ոմանց ի քահանայից և յեկեղեցականաց՝ յաւէտ ի զիւզօրայս, երևելիք էին՝ Ներշապուհ Նախկոպոս Սամիկոնէից, և Պետրոս Վերթոզ Նախկոպոս Սիւնեաց :

Ի սմին Ժողովի յուղղութիւն անկարգութեանցն սահմանեն կանոնս երեսուն և ութն՝ առեալ զբազումս ի կանոնաց սրբոյն Սահակայ Պարթևի, որք ի կանոնադիրս մեր կոչեն Կանոնք Ներսեսի և Ներշապուհ Սամիկոնէից Նախկոպոսի, որոց և համառօտութիւն զնի աստանօր :

ա. Չառուրս քահանայից տարցեն յԵկեղեցին, և մի՛ ի տուն միոյ ուրուք քահանայի և եթ :

բ. Չառուրս ողորմութեան Պատարագի առանց զօշաքաղութեան առցեն քահանայք :

գ. Տուրք Եկեղեցւոյ մի՛ տացին վաշխիւք :

դ. Մի՛ վաճառեսցի ումեք շնորհք քահանայութեան, և մի՛ իշխեսցեն աշխարհականք առնել զգործ քահանայի :

ե. Երկկին պաշտօնեայք որոշեալ կայցեն յեկեղեցական կարգէ, և մի՛ վայելեսցեն զհաս Եկեղեցւոյ :

զ. Վահանայք մի՛ խափանեսցեն ըզպատարագսն յառուրս շաբաթու և կիրակէի, և մի՛ ծուլացին ի պաշտամանց յառուրս տօնից, և եթէ անփոյթ լիցին, ի հասից առուրն զրկեսցին :

է. Վահանայք մի՛ իշխեսցեն նուազեցուցանել զբաժակ սրբոյ հաղորդութեան պատճառաւ չքաւորութեան :

ը. Ի մատակարարել քահանայից ի սուրբ բաժակէ առ ժողովուրդն՝ մի՛ խառնեսցին ի նոյն նորոգ գինի :

Ի. Չվարագոյրս խորանին մի՛ տացեն ի տունս փեսայի և հարսին :

Ժ. Վահանայք մի՛ տացեն այլոց մանաւանդ կանանց՝ զջուր մկրտութեան պահել ի տուն և մկրտել զերեսայս :

Ժա. Ի քահանայս նախագահ համարեսցի՝ որ իցէ ձեռնադրեալ յառաջագոյն :

Ժբ. Առանց քահանայի մի՛ իշխեսցեն դպիրք յԵկեղեցւոջ պաշտամունս կատարել :

Ժգ. Վահանայք մի՛ զգեցցին զգետաշխարհականի կամ զնեոտրի :

Ժդ. Տուրք Եկեղեցւոյ ըստ օրինի բաժանեսցին, աւագ Երիցանց՝ երկու և կէս մասն, հասարակ քահանայից՝ երկու մասն, սարկաւազաց՝ մի և կէս մասն, դըպրաց՝ և այրի կանանց եթէ իցեն կարօտ՝ մի մասն :

Ժե. Սպասք Եկեղեցւոյ ի ձեռս աւագ Երիցուն լիցի, և բնաւ յաշխարհական իրս մի՛ զբաղեսցի :

Ժզ. Մկրտութիւնն յԵկեղեցւոջ լիցի հանդերձ ամենայն սպասուք յաւազանն սուրբ, և եթէ վտանդ կայցէ, ի տան կատարել :

Ժէ. Ի մկրտել քահանային՝ մի՛ կայցեն առ նմա կանայք, ունելով զտեղի սարկաւազաց :

Ժզ. Սարկաւազունք մի՛ իշխեսցեն մըկրտութիւն առնել առանց հարկի :

Ժը. Վահանայք մի՛ իշխեսցեն տրովք կատարել զխորհուրդ ապաշխարութեան :

Ի. Եթէ քահանայն յայտնեսցէ զխոստովանութիւն ապաշխարողաց՝ նղովիւք լուծցի :

Իա. Մի՛ լիցի հասարակ գերեզման յԵկեղեցւոջ :

ԼԷ. Վահանայք մի՛ իշխեսցեն առնուլ վաշխս :

ԼԺ. Օգագապս այս ինքն զնուէրս, որք վասն աղքատաց ընծային, մի բաժանեսցեն քահանայք ըստ հաճոյս. այլ ի նմին ժամու յանդիման ընծայողն բաշխեսցեն աղքատաց :

ԼԻ. Որք հաղորդելոցն են, մի՛ ճաշակեսցեն ինչ նախ ի տան. և եթէ դիտացեն զայս քահանայք կամ կղերիկոսք, մի թողցեն հաղորդել :

ԼԿ. Տղայոց պսակ մի՛ լիցի. և որք ի չափ հասեալ իցեն, առանց անսանելոյ զմիմեանս մի՛ պսակեսցին :

ԼԼ. Այոս ընդ այրւոյ մի պսակեսցի, և ոչ այրի ընդ կուսի առանց հարկի :

ԼԽ. Վահանայք մի՛ իշխեսցեն երթալ և ընտրել ըստ հաճոյս իւրեանց զարջաւ վասն ողորմութեան նուիրաց :

ԼԿ. Վահանայք մի՛ իշխեսցեն զնուիրեալ անասունս պահել կենդանի, այլ տացեն զենուլ և բաշխել աղքատաց :

ԼԶ. Օգուուրս Վառասնորդաց կամ զԱռաջաւորաց մի՛ որ իշխեսցէ լուծանել :

ԼԷ. Իմեծի շաբաթու ճրագալուցի մի՛ որ յառաջ քան զՊատարագն հաղորդեսցի օրինաց, բայց եթէ վասն հարկի տկարութեան :

ԼԸ. Ժողովրդականք հակառակ քահանայից մի՛ իշխեսցեն հրաման տալ :

ԼԹ. Մի՛ գտցի քահանայ արբեցող կամ հանգանակող, և մի՛ ունիցի արծաթագին աղախին. և մի՛ առնուցու ինչ ի կապենից :

ԼԺ. Մի՛ բնաւ մոցէ կին ի վանս արեւդայից վասն հաց եփելոյ կամ կով կթելոյ. և մի՛ վասն ո՛ր և իցէ գործոյ :

ԼԻ. Ընապատաւորք յառաջ քան ըզմուտս արեւու դարձցին յանապատ իւրեանց :

ԼԿ. Վանականք մի՛ օթեսցին ի տունս աշխարհականաց, այլ ի մերձակայ վանս. և եթէ չիցէ ի տեղւոջ վանք, ի տուն աւագերիցու կացցեն :

ԼԼ. Վանականք մի՛ իշխեսցեն վաճառականութիւն առնել. և մի՛ պահեսցեն առանձին զերիվարս և զայլ ինչ այսպիսի :

ԼԽ. Եղանդաւորաց բնակութիւն մի՛ տացի ի տան :

ԼԿ. Յամենայն ամիսս մի՛ պահք պահեսցի :

ԳԼ. ԺԴ.

Երբոր Ժողովի Գոհն. որ հասնէցաւ նոր Տոմար և Լուսինան Հայոց :

(Եմք Տեառն 551) : Մովսէս յԱղուարդայ յԱրագածոտն գաւառէ յաջորդեալ յԵթու Հայրապետութեան ի Գուին յեա Յովհաննու Երկրորդի ի Գաբեղենից, արար Ժողով կպիսկոպոսաց և իմաստնոց անդէն ի Գուին յԵթուն հայրապետական, և բաղում քննութեամբ նորոգեաց և ուղղեաց զՏումարն Հայոց ըստ ձեռնտուութեան ժամանակին նորոգ սկսեալ զըջանն՝ զորմէ փոյթ յառաջագոյն ունէր, յամի Տեառն 551. յորմէ սկսաւ և թուական Հայոց. զի ի յաջորդ 552 ամի Ժողովոյն՝ եղև առաջին ամ Հայոց թուականին. որով սկսան Հայք վարիլ այնուհետև նովին տումարաւ և զթուական ամացն անտի չափել, այն է ի 552 ամէն :

Յովհաննէս Կաթողիկոս պատմարան
զԺողովոյն Մովսեսի յազադս նորոգու-
թեան Հայոց տումարին՝ վկայէ այսպէս:

«Յամի տասներորդի հայրապետու-
թեան նորա (Մովսեսի) և 31 ամին
«Խոսրովայ որդւոյ Կաւատայ արքային
«Պարսից, լցեալ բովանդակեալ շրջա-
«նակ բոլորակի 532 ամաց, ապա ի հը-
«րամանէ մեծին Մովսեսի՝ քերթողք և
«գիտունք արուեստին եղին զկարգ թու-
«ականութեան թորդոմեանս համարոյ՝
«որ է շարժութիւն յառաջախաղաց, և հի-
«մըն զանազան մասանց արուեստին: Եւ
«այսպէս ըստ հայկականս լեզուի տուեալ
«տումար տօնից տարեկանաց, յայնմ հետէ
«նչ կարօտանային իբրեւ մուրացիկ իմն
«առնելով յազգաց զպիտանի խորհրդոցն
«արարողութիւնս,»:

ԳԼ ԺԵ.

Զորորդ ժողով է Գուին Լաան Կիւրմէ
Կաթողիկոսին Վրաց:

(Եւք Տեառն 596): Կիւրիովն Վրացի
վանեղէց եկեղեցւոյ Կաթողիկոսարանին
Հայոց ըստ կացուցանելոյ Հայրապետին
Մովսեսի, և քորեպիսկոպոս Երարատայ,
յառաջագոյն հասու լիալ մտաց ժողովոյն
Քաղկեդոնի, իբրեւ ձեռնադրեցաւ ի Մով-
սեսէ ի Կաթողիկոսութիւն Վրաց, քա-
րողեաց անդ ի Վիրս զդաւանութիւն ժո-
ղովոյն, որում հակառակ կացեալ Մով-
սէս եպիսկոպոս Յրդաւայ քաղաքի ի Վիրս
ձեռնադրեալն ի Կիւրիովնէ, իբրեւ ամ-
բաստանեցաւ առ Կիւրիովն, ի կոչելն
զնա Կիւրիովնի՝ փախեաւ առ Երբաշամ
Կաթողիկոսն Հայոց փոխանորդ Մով-

սեսի, և չարախօս եղև զԿաթողիկոսէ
իւրեանց, իբր զի յազադս չընդունելոյ իւրոյ
զԺողովն Քաղկեդոնի՝ հալածեաց զինքն:

Եպա Երբաշամ Կաթողիկոս յետ
բազում փոխադարձ թղթակցութեանց
առ միմեանս, տեսեալ զհաստատուն
միաս Կիւրիովնի ընդ Քաղկեդոնեան դա-
ւանութիւնն, զոր ընկալեալ էին ի ձեռն
նորա և Վիրք համօրէն, ժողով առնէ
եպիսկոպոսաց ի Գուին յերրորդ ամի
Հայրապետութեան իւրոյ յամի 596, և
մատուցեալ անդ զբանս ժողովոյն Քաղ-
կեդոնի գրեալ ի Կիւրիովնէ, և համա-
րեալ զայն ըստ մտաց թէոքորոսի և
Նեստորի, հերքեցին զայն և նզովեցին
զԿիւրիովն և զնոսին որք ընդունին զժո-
ղովն Քաղկեդոնի. արգել ևս նզովիւք,
զի մի՛ ոք հաղորդեսցի ընդ Վիրս. որով
և որոշեցաւ Եկեղեցին Հայոց ի Վրաց,
որաց կաթողիկոս ձեռնադրէր ցայն վայր
ի Կաթողիկոսէն մերմէ:

Եւ յովհաննէս Կաթողիկոս այսպի-
սի ունի բան զԿիւրիովնէ. «Եյս Մով-
սէս զԿիւրիովն սրբոյ Կաթողիկէի վանաց
երէց ձեռնադրէ յարքեպիսկոպոսութիւն
Վրաց նահանգին և Գուգարաց և Եգե-
րացոց ըստ օրինակի կարգացն առաջնոց,
իսկ ապա մերձ ի վաղձանն Մովսեսի Կիւ-
րիովն զճշմարիտ կարգաց և զկրօնից ուղ-
ղութիւնն ի բաց խզեալ, զոր ի հարցն՝ մե-
րոց ուղղափառաց աշակերտեալ էին կող-
մանքն այնոքիկ, միտէր զհետ ամբարիշտ
ժողովոյն Քաղկեդոնի, զկնի փառամոլ
ամբարհաւածութեանն իւրոյ ձգեալ դա-
ւաճանեալ զնախահարս աշխարհին: Եպա
վաղվաղակի ի դերեւ ելանէր խոկացեալ
նորայն դաւաճանութիւն,»:

Իսկ զԺողովոյն հրամանաւ Արրահամու
և քաջին Սմբատայ՝ այսպէս. «Բայց մեծ
Հայրապետն Արրահամ Քրիստոսաւանդ
կարգօք և առաքինահրաշ երկօք դուն ի
վերայ դործէր, զի թերևս հետք լիցի դար-
ձուցանել զԱւուրիովն և զհնազանդեալսն
նմա ի մոլորութեան ճանապարհէն. այլ
նորա ոչ թերևս զճմարտութիւն պա-
տուէին, քան թէ միայն զօշաքաղութեան
և փառամով բարուց բոյսս ի վեր ընծիւ-
ղեալ աճեցուցանէին: Աւայսպէս ապա
զմարդադաւան տօմարն Աւոնի փոխա-
նակէին ընդ առաքելական աւանդից երիցս
երանեալ սուրբ լուսաւորչին Պրիգորի,
որ եբայց նոցա զդուռն լուսոյ ճմարիտ
աստուածգիտութեան, »:

«Աւայնուհեան բազում եպիսկոպո-
սաց Ժողով արարեալ մեծի Հայրապետին
Արրահամու ի Վուին քաղաքի հրամանաւ
քաջին Սմբատայ և այլոց ևս նախարա-
րաց, աստուածամերձ և ամբիժ այցիլու-
թեամբ ուշ եղեալ աստուածային գրոց
և ստուգադէտ իմացուածիւ ծանուցեալ
զուղիղ դաւանութիւն սուրբ Հարցն, նը-
ղովեցին զԱւուրիովն զպառակախէն Ակեղե-
ցոյ Քրիստոսի և զամենայն հնազան-
դեալս և զհամախոհս չար հերետի-
կեանն, և անէծս ցաւազինս ուղղափառ
դաւանողաց մերոց նահանգիս ի վերայ և-
ղին, ոչ բնաւին իսկ ընդ նոսա միաբանել,
որք զկնի Աւուրիովնի չարափառի շեղե-
ցան, » և այլն:

ԳԼ. ԺԶ.

Առաջին Ժողով ի Վարին վասն Բանի Ժողո-
վոյն Վաղկիդոնի:

(Միջ Տեառն 629): Վարձ արարեալ
Հերակլի կայսեր ի պատերազմացն ընդ
Պարսից ի Կարնոյ քաղաք Թէոդուպոլիս
և բազում խնամօք առ Հայս ցուցեալ
զսէր յեղեալ ի բաժնին Յունաց, լուեալ
եթէ բազում խռովութիւն գոյ ի մէջ նո-
ցա և Հայոց եղիլոյն ի բաժնի Պարսից,
ուրանօր էր և Հայրապետութիւն Հայոց
ի Վուին, յաղագս ընդունելոյ եղիլոյն ի
բաժնի Յունաց զԺողովն Վաղկիդոնի,
հրամանաւ կայսեր գումարեցաւ դաւա-
ռական ժողով ի նմին քաղաքի յեպիս-
կոպոսաց Հայոց և ի Յունաց, ուր կոչե-
ցեալ և Ազրի հայրապետի հրեշտակու-
թեամբ ՄԺեժի Գնունոյ զօրավարի
Հայոցն եղիլոց ի Յոյնս, յաղագս ընդու-
նելոյ և պարսկահայոց զԺողովն Վաղկե-
դոնի, տարաւ ընդ իւր Ազր հայրապե-
տ ի Հայաստանէ զչորս եպիսկոպոսոսնս,
զերկուս վարդապետս և զքեռորդի իւր
զԹէոդորոս զեղբօրորդի Աոմիասս Աա-
թուղիկոսի, նաև զայլս, հանդերձ քանի
մի իշխանօք՝ ըստ զրելոյ Ջաքարեայ Ծոր-
ծորեցոյ և Խորենայ Սահառունոյ:

Հայսմիկ ժողովի եպիսկոպոսաց ի յա-
ռաջարկել կայսեր ընդունել հայրապե-
տին և եպիսկոպոսացն զԺողովն Վաղկե-
դոնի, խնդրեն ի կայսերէն զհանդանակ
հաւասոյ Ակեղեցւոյն Յունաց ձեռագ-
լութեամբ նորին, և քննեալ զնոյն դա-
ւանութիւն, յետ բազում խորհրդոյ ընդ
իշխանս և ընդ եպիսկոպոսս ի վերայ այնո-
րիկ, ի մի հաւանութիւն եկեալ ընկալան

զժողովն Վաղկեղոսի ի ներկայութեան
կայսեր, միաբանեալ ընդ Յոյնս ի բան
խոստովանութեան հաւատոյ յամի 629,
և յառաջնում ամի հայրապետութեան
իւրոյ:

Ապա պարզեալ ի կայսերէն ընկալեալ
զերեք մասն Աղբ զեղջ հայրապետն Ա-
ղբը, իբրեւ վերադարձեալ մտանէր ի Հայ-
րապետական Աթոռն ի Վուին, յընդա-
ռաջէն նմին ուխտի Ակեղեցւոյն՝ ոչ եւա-
նէր ընդ նոսա Յովհաննէս Արդապետ
փիլիսոփայ ի ժամանակին ըստ զրելոյ Յովհ.
Աթուղիկոսի պատմագրի, որ Փակակալն
էր կարգեալ ի հայրապետէն Ակեղեցւոյ
սրբոյն Վրիգորի անդ ի Վուին ի Հայրա-
պետական Աթոռն, յաղագս ոչ տանելոյ
հայրապետին և զնա ընդ իւր առ կայսր
ի Արին վասն բանի Վաղկեղոսի ժողո-
վոյն, զիտացեալ թէ ընկալեալ է Հայրա-
պետին զայն ժողով. զոր լուեալ հայրա-
պետին, բռնութեամբ ածեալ առ իւր,
իբրեւ հարցանէ զպատճառ չեղանելոյ նորա
ընդ առաջ իւր, պատասխանի տայ Յով-
հաննէս ըստ զրելոյ Յովհ. Աթուղիկոսի,
« խրոխտումն և ամբարհաւածութիւն
յիս ոչ գտանի, այլ ջատագով ճշմար-
տութեանն լինել հաւանիմ. քայց քո յի-
րաւի կոչեցաւ անունդ Աղբ, վասն զի՝
յեզբ հաներ զՀայաստանեայսս, քակեալ
զսահման հաւատոյ հարցն մերոց ուղղա-
փառաց, և խրամատեալ զցանկն առաքե-
լական, և ի մարդագաւան տումարն Առնի
կործանեալ »:

(Շարունակէի),

ԱՐԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՅԵԱԼԵՆ.

Հայաստանեայց Քրիստոսական անդրանիկ Եկեղեց-
ւոյ հիմնարկութեան և հաստատութեան անդուգական՝
մեծապոյծաւ և նախանձելի փառաւորութեանց հետ՝
յարատեւած և արդիւնաւորուած Աւետարանական
պարզ ճշմարտութիւնք և յայտնութիւնք, Աստուած-
պաշտութեան վսեմ հանդէսք և արարողութիւնք,
կրօնական՝ եկեղեցական՝ բարոյական և մտաւորա-
կան օրէնք՝ բարեկարգութիւնք և ողջամիտ դրու-
թիւնք էին՝ որք միշտ իւր որդւոց ջերմեռանդ սէրբ,
հաւատք և յոյսը առ Աստուած և առ Քրիստ կրօն
վառ և բարբոր պաշնցին և արծարծեցին առանց
դրդուելոյ ի դրանց զժողոց:

Եթէ բազդատեմք հեռանդութեան և Քրիստո-
նէութեան ժամանակներ ի Հայս յարատեւած և կամ
ի նորոյ հաստատուած Թէ կրօնական և Թէ բարոյա-
կան և մտաւորական կապերը և ուղղութիւնք՝ որք
հոգեկան բազմանայ և փրկութեան կառաջնորդէին,
զիւրեաւ կրիսեւամտիւք և կրչափեմք հեռանդական
և Քրիստոնէական կրօնից յընդհանուրի և ի մաս-
նաւորի շողկապած տրամադրութեանց անհուն տար-
բերութեանքը, որք զժողովուրդ յաւէտ գերասրանչ իմն
անմկանօր կյափշտակէին և կողերէին:

Անշնչտ Քրիստոնէական կրօնի Աստուածային
յայտնութիւնք և գերմարդկային արդիւնքներ, և ա-
ռանց ստուերականի կամ մագական և խաբէական
բարոյութեանց և արգասեաց՝ Շնորհական օրինաց և
Աւետարանական ճշմարտութեանց ի հոգիս սփռած՝
զեղած և ներգործած ազգեցութիւնք և կենսա-
պարզիւ շնորհներ պարզ ի պարզոյ ինքնին և բա-
ցարժակապէս կուտրբերէին և կուտրբերին յայլոց, սա-
կայն Հայաստանեայց Եկեղեցւոյ նկատմամբ՝ Աւետա-
րանական քարոզութեանց և ճշմարտութեանց սահմա-
նած և յարատեւ պարզած առաւել վսեմ՝ ողջամիտ
և ազատ արդիւնքներն՝ գերազանց փառաւորու-
թիւնք և պարծանքներ կրնձային միշտ և կվերա-
դրեն մերս Եկեղեցւոյ:

Ի՞նչ էին սրբա:

— Հոգւոյ փրկութեան հետ՝ ժողովրդեան եղբանիկ
և ապաւնով բարեկեցութեան և մտաւորական զար-
գացման տրամադրութիւնք և ուղղութիւնք: